ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Կարեն Ալավերդյան, ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2023 թվականի մայիսի 30-ից հունիսի 2-ը

3. Հրավիրող կողմը

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն ԵԱՏՄ Ֆինանսական շուկաների գծով Խորհրդատվական կոմիտեին կից ԵԱՏՄ անդամ պետություններում աուդիտի և հաշվապահական հաշվառման ոլորտներում ծառայությունների մատուցման միասնական շուկայի ձևավորման աշխատանքային խմբի հերթական նիստին:

5. Քննարկված թեմաները

- «Աուդիտորական գործունեության բնագավառում ԵԱՏՄ անդամ պետությունների մարմինների համագործակցության կարգի վերաբերյալ» համաձայնագրի նախագծի քննարկում,
- ԵԱՏՄ իրավական կարգավորումներում հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվողականության բնագավառում ծառայություններ մատուցողների նկատմամբ ներդաշնակեցված պահանջներ սահմանելու հարցի քննարկում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

- ԵԱՏՄ Ֆինանսական շուկաների գծով Խորհրդատվական կոմիտեին կից ԵԱՏՄ անդամ երկրներում աուդիտի բնագավառում ծառայությունների մատուցման միասնական շուկայի ձևավորման աշխատանքային խմբի հերթական նիստի ընթացքում քննարկվեց «Աուդիտորական գործունեության բնագավառում ԵԱՏՄ անդամ պետությունների մարմինների համագործակցության կարգի վերաբերյալ» համաձայնագրի նախագծի լրամշակված տարբերակը:
- Աշխատանքային քննարկման և մտքերի փոխանակման արդյունքում ձևավորված նոր առաջարկությունները կներկայացվեն կողմերի համաձայնեցմանը՝ աշխատանքային նիստի արձանագրությամբ: Որոշվել է նաև հաջորդ նիստում անդրադառնալ համաձայնագրի հիմնական հասկացությունների և տերմինների քննարկմանը, որը նախատեսվել էր անցկացնել նախագծի քննարկման եզրափակիչ փուլում:
- Աշխատանքային խմբի անդամների կողմից մանրամասն քննարկվել են անդամ պետություններում աուդիտի որակի հսկողության հետ կապված ընթացակարգերը, գործընթացում հնարավոր խոչընդոտներն ու դրանց հաղթահարման ուղիները: Արձանագրվել է, որ աուդիտի որակի հսկողության անցկացման պատասխանատուն այն պետությունն է, որի տարածքում մատուցվել են աուդիտորական ծառայությունները:
- Աշխատանքային խումբը քննարկել է նաև հաշվապահական հաշվառման բնագավառում միասնական շուկայի ձևավորման հետ կապված հարցերը, մասնավորապես՝ ԵԱՏՄ անդամ պետություններում հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվողականության բնագավառում ծառայություններ մատուցողների նկատմամբ ներդաշնակեցված պահանջներ սահմանելու նախագիծը:
- Աշխատանքային խմբի քննարկման արդյունքում որոշվել է ԵԱՏՄ անդամ պետություններում հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվողակա-նության բնագավառում ծառայություններ մատուցողների նկատմամբ ներդաշնակեցված պահանջներ սահմանելու նախագիծը չտարածել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտի վրա:
- ԵՏՀ աշխատակազմը պետք է ներկայացնի լրամշակված կարգավորում, որը կսահմանի տարբեր անդամ-երկրներում հատուկ կամ ավելի խիստ կարգավորում պահանջող կազմակերպությունների ցանկը, որոնցում որակյալ ֆինանսական տեղեկատվություն ապահովելու համար ծառայություններ մատուցող սուբյեկտների նկատմամբ կսահմանվեն

համեմատաբար խիստ պահանջներ, մասնավորապես՝ ծառայություն մատուցողը պետք է ունենա աուդիտորի որակավորում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Առկա չեն

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Հանդիպումների ընթացքում, որպես աշխատանքային խմբի անդամ ներկայացրել եմ ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումն ու առաջարկությունները վերոնշյալ համաձայնագրի նախագծում ամրագրված դրույթների վերաբերյալ, ինչպես նաև հաշվապահական հաշվառման բնագավառում միասնական շուկայի ձևավորմանն ուղղված քայլերի վերաբերյալ: Մասնավորապես, ներկայացվել է, որ ֆինանսական հաշվետվությունները հրապարակելու պահանջ ունեցող կազմակերպություններին հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցելու համար համապատասխան մասնագետը կամ խմբի ղեկավարը պետք է ունենա աուդիտորի որակավորում:

Քննարկումների արդյունքում որոշում է կայացվել ԵՏՀ աշխատակազմի կողմից ամփոփել քննարկման արդյունքները, ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա լրամշակել վերը նշված փաստաթղթերի նախագծերը և ներկայացնել աշխատանքային խմբի անդամներին՝ առաջիկա նիստին քննարկելու նպատակով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Հունիսի 13, 2023թ.

X _____